

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 22/4

14 հոկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց քաղաքացի Դերենիկ Մարգարյանի 18.09.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 20.08.2014 թ-ի թիվ 229 որոշման դեմ:

Քաղաքացի Դերենիկ Մարգարյանի գանգատում բերված փաստարկները.

Դերենիկ Մարգարյանը (այսուհետ նաև գանգատաբեր) հայտնում է, որ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված է եղել ՀՀ պետական ռեգիստրում 13.11.1995 թ-ից՝ երեք տարի ժամկետով: Գործունեության ավարտը սահմանվել է մինչև 12.03.1998 թ-ը: Տեղեկացված լինելով գործունեության ավարտի մասին հանձնել է պետական ռեգիստրի վկայականը Աշտարակի ՏՀՏ: Աշխատելու ժամանակահատվածում բարեխիղճ կատարել է հարկային բոլոր պարտավորությունները:

Ըստ գանգատի, տեղեկանալով, որ հարկային պարտավորություններ առկա չեն 12.03.1998 թ-ից դադարեցրել է գործունեությունը: Սակայն, 21.08.2014 թ-ին Աշտարակի ՏՀՏ-ից գանգատաբերը ստացել է նամակ, որի համաձայն 25.07.2014 թ-ի դրությամբ առկա է չկատարված հարկային պարտավորություն՝ գումարով 362.666 դրամ: Վերջինս առաջադրվել է պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի գծով 2009 թ-ից մինչև 2012 թ-ն ընկած ժամանակահատվածի համար:

Դերենիկ Մարգարյանն այցելել է հարկային տեսչություն և պարզել, որ գործունեությունը դադարեցված չէ: Գանգատաբերը գործունեությունը դադարեցրել է (լուծարվել է) միայն 27.08.2014 թ-ին:

Դերենիկ Մարգարյանն իր գանգատն է հայտնում այն բանի համար, թե ինչու որևէ անգամ չի տեղեկացվել հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ: Այժմ նա թոշակառու է և ի վիճակի չէ վճարել որոշմամբ առաջադրված պարտավորությունը:

Ելնելով վերոգրյալից՝ Դերենիկ Մարգարյանը խնդրում է հարցին տալ դրական լուծում:

ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Դերենիկ Մարգարյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը 20.08.2014 թ-ին ընդունել է թիվ 229 որոշումը (այսուհետ նաև Որոշում), համաձայն որի 25.07.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Դերենիկ Մարգարյանի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են ընդամենը 362.666 դրամ, որն ամբողջությամբ պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով է և ենթակա է գանձման:

Սույն գործում առկա նյութերի և ապացույցների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ քննարկվող դեպքում Ա/Ձ Դերենիկ Մարգարյանի նկատմամբ պետք է կիրառվեին 11.11.2005 թ-ի «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի և 26.05.2011 թ-ի «2008 թ-ի հունվարի 1-ի դրությամբ հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու

և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» ՀՀ օրենքի դրույթները հետևյալ պատճառաբանությամբ:

11.11.2005 թ-ի «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև 11.11.2005 թ-ի օրենք) 1-ին հոդվածի համաձայն. «Սույն օրենքը տարածվում է միայն եկամտահարկի և (կամ) պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների վճարման հետ կապված պարտավորություններ ունեցող անհատ ձեռնարկատերերի վրա»: 11.11.2005 թ-ի օրենքի 4-րդ հոդվածի համաձայն. «Սույն հոդվածում նշված անհատ ձեռնարկատերերի կողմից 2006 թվականի հունվարի 1-ից հետո մինչև պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառման պահը պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարներ չեն հաշվարկվում (չեն վճարվում): Սույն հոդվածում նշված անհատ ձեռնարկատերերի ցանկերը (2003-2005 թվականների համար հաշվարկված և չվճարված պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների պարտադիր նշումով) հարկային տեսչությունները մինչև 2006 թվականի սեպտեմբերի 1-ը ներկայացնում են պետական ռեգիստրի գործակալության համապատասխան տարածքային ստորաբաժանումներ՝ մինչև 2006 թվականի նոյեմբերի 1-ը պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառում կատարելու, նրանց վկայականները անվավեր ճանաչելու և պարտավորությունները հրապարակելու համար»:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Դերենիկ Մարգարյանի պարտավորությունները եղել են պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների գծով և նշված 11.11.2005 թ-ի օրենքի կիրառման պայմաններում գանգատաբերը պետք է ազատվեր 2003-2005 թվականների համար հաշվարկված և չվճարված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարներից, 2006 թվականի հունվարի 1-ից հետո մինչև պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառման պահը պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարներ չպետք է հաշվարկվեին, ինչպես նաև հաշվառման վայրի հարկային տեսչությունը Ա/Ձ Դերենիկ Մարգարյանի վերաբերյալ տվյալները պետք է ներկայացնե՞ր պետական ռեգիստրի գործակալության համապատասխան տարածքային ստորաբաժանումներ՝ վկայականը անվավեր ճանաչելու և պարտավորությունները հրապարակելու համար, ինչը, սակայն, չի կատարվել:

Իր հերթին, 26.05.2011 թ-ի «2008 թ-ի հունվարի 1-ի դրությամբ հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի համաձայն. «Սույն օրենքը տարածվում է այն կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև պետական կամ պետական բաժնեմաս ունեցող կազմակերպությունների (այսուհետ՝ հարկ վճարող) վրա, որոնք 2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմին չեն ներկայացրել որևէ հաշվետվություն, հաշվարկ կամ հայտարարագիր (այսուհետ՝ հաշվետվություն) և հարկային մարմնում առկա փաստաթղթերի համաձայն չունեն գույք ու հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ կամ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի համաձայն չեն վերագրանցվել, չունեն գույք և հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ»:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Սույն օրենքի 1-ին հոդվածում նշված հարկ վճարողների ցանկը և հարկային մարմնի կողմից վերահսկվող պարտավորությունների բացակայության մասին տեղեկանքը հարկային մարմինը մինչև 2011 թվականի հուլիսի 15-ը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ներկայացնում է

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն (այսուհետ՝ պետական ռեգիստր)»:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Դերենիկ Մարգարյանը բավարարել է Օրենքի 1-ին հոդվածով նախատեսված դրույթներին: Մասնավորապես, Դերենիկ Մարգարյանը 2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանդիսանալով անհատ ձեռնարկատերեր հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմին չի ներկայացրել որևէ հաշվետվություն, հաշվարկ կամ հայտարարագիր և հարկային մարմնում առկա փաստաթղթերի համաձայն չի ունեցել գույք, իսկ 11.11.2005 թ-ի օրենքի կիրառման պայմաններում չէր ունենա նաև հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ: Հետևապես, Ա/Ձ Դերենիկ Մարգարյանի վերաբերյալ տվյալները հարկային մարմնի կողմից պետք է ընդգրկվեին համապատասխան ցանկում և մինչև 2011 թվականի հուլիսի 15-ը սահմանված կարգով ներկայացվեին ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ Օրենքով սահմանված կարգով պետական հաշվառումից հանվելու համար, ինչը, սակայն, չի կատարվել: Այսինքն, Օրենքով նախատեսված ընթացակարգի դրույթները կիրառվելու դեպքում Ա/Ձ Դերենիկ Մարգարյանի նկատմամբ սոցիալական ապահովության գծով լրացուցիչ պարտավորություններ չէին հաշվարկվի:

Միևնույն ժամանակ արձանագրվեց այն փաստը, որ Ա/Ձ Դերենիկ Մարգարյանի պետական գրանցման թիվ 01Ա017784 վկայականի թիվ 02 ներդիրի համաձայն գործունեության ժամկետը սահմանվել է մինչև 12.03.0998 թ-ը: Այսինքն, 12.03.0998 թ-ից Ա/Ձ Դերենիկ Մարգարյանի գործունեության ժամկետը դադարած լինելու և դրանից հետո ընկած ժամանակահատվածում Ա/Ձ Դերենիկ Մարգարյանի կողմից փաստացի գործունեություն իրականացվելու վերաբերյալ ապացույցներ առկա չեն:

Ելնելով վերոգրյալ փաստական հանգամանքներից՝ Հանձնաժողովը գտնում է, որ Դերենիկ Մարգարյանի գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 20.08.2014 թ-ի թիվ 229 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՍԻՐՈՒՄՅԱՆ